ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1964 Общественные науки

Ա. Ա. Բայրամյան

ԱԼԵՔՍԱՆԴՐԵՏԻ ՍԱՆՋԱՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՍՏԱՏՈՒՍԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

(1920—1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

Ալեքսանդրետի Սանջաքը[1] *մինչև 1939 թ. հուլիսը հանդիսանում էր հյուսիսային Սիրիայի մի շրջանը. այն զբաղեցնում էր 4.805 քառ. կմ տարածություն և ուներ 240.000 բնակչություն։ Ինչպես ամբողջ Սիրիան, Ալեքսանդրետի շրջանն էլ մնաց օսմանյան տիրապետության տակ մինչև 1918 թ. հոկտեմբերի 30-ը, երբ Մուդրոսի զինադադարի պայմանագրով այն անցավ Ֆրանսիային։ Զենարկելով գրավված տերիտորիաների վարչական կազմակերպումը, ֆրանսիական ռազմական իշխանությունները 1918 թ. նոյեմբերին ստեղծեցին «Ալեքսանդրետի Ավտոնոմ Սանջաք»*[2], *վարչական նոր միավորի մեջ ընդգրկելով Հալեպի նահանգի Ալեքսանդրետն, Ռնտիոքի, Բեյլանի և Հարիմի կազաները (գավառները)։*

Այսպիսի «ավտոնոմ սանջաքի» ստեղծման անհրաժեշտությունը չէր թելադրվում ո՛չ տնտեսա-աշխարհագրական գործոններով, ո՛չ էլ շրջանի ազգաբնակչության շահերով կամ ցանկություններով։ Այն ստեղծվեց ֆրանսիական իմպերիալիստների կողմից Divide ut imperes *(բաժանի՛ր, որ տիրես) սկզբունքից ելնելով այդ խոստովանում է ֆրանսիական գեներալ Կատրուն*[3]*։*

Քաղաքական այս ակտը հանդիսանում է առաջինը այն քայլերից, որ Ֆրանսիան կատարեց հասնելու համար իր հեռավոր նպատակին՝ հարատև դարձնել իր տիրապետությունը Սիրիայում։ Ֆրանսիական իմպերիալիզմի պատգամախոսները Սիրիայի մասնատման այս և հետագա քայլերը միշտ փորձել են ներկայացնել որպես «ազգային փոքրամասնությունների կրոնա-մշակութային ազատությունների պահպանման նկատմամբ իրենց տրադիցիոն հոգատարության» արտահայտություն[4]*։ Բայց արդյո՞ք Սանջաքում այդպիսի «հոգատարության» անհրաժեշտություն էր զգացվում։ Ո՞նչ բանի լին ձգտում Սանջաքի քաղաքական խմբավորումները և ազգաբնակչության տարբեր խավերը։ Ահա այս հարցերի լուսաբանմանն է նվիրված տվյալ հոդվածը։*

1920 թ. ապրիլի 25-ին Սան-Ռեմոյի կոնֆերանսում Սիրիայի և Լիբանանի մանդատը հանձնվեց Ֆրանսիային։ 1920 թ. սեպտեմբերի 1-ին Սիրիա-Լիբանանում Ֆրանսիայի Բարձր կոմիսարը հաստատեց 1918 թ. նոյեմբերի 27-ին ռազմական իշխանությունների կողմից «Ալեքսանդրետի Ավտոնոմ Սանջաքի» ստեղծման ակտը։ 1921 թ. մարտի 9-ին Լոնդոնում ստորագրված ֆրանս-թուրքական անջատ պայմանագրով, թուրքերի պահանջով (Lettre I), *«ստեղծվում է վարչական հատուկ ռեժիմ Ալեքսանդրետի շրջանի համար, որտեղ բազմազգ ազգաբնակչություն գոյություն ունի։ «Հատուկ ռեժիմը» ուժի մեջ մտավ Բարձր կոմիսարի 1921 թ. օգոստոսի 8-ի հրամանագրով։ Նույն տարվա հոկտեմբերի 20-ի Անկարայի ֆրանս-թուրքական պայմանագրում Սանջաքի մասին ասվում է. «Հատուկ վարչական ռեժիմ կհաստատվի Ալեքսանդրետի շրջանում։ Այս շրջանի թուրք ցեղին պատկանող բնակիչները իրենց մշակույթի զարգացման համար կօգտվեն բոլոր դյուրություններից։ Թուրքերեն լեզուն այնտեղ կունենա պաշտոնական բնույթ (հոդված 7)»*[5]*։ Կից նամակներով պահանջվում էր թուրքական*

---

[1] «Սանջաքը» օսմանյան վարչա-տերիտորիալ ոաժանումն էր։

„Asie Française", № 13, Paris, 1930, p. 17.

[2] Տե՛ս Catroux, general—„Deux Missions en Moyen-Orient", Paris, 1956, p. 27.

[3] Morgan Jones, J. „La Fin du Mandat français en Syrie et au Liban", Paris, 1938, p. 120.

[5] Recueil des Actes Diplomatiques en vigueur dans les Etats du Levant sous Mandat français, Beyrouth, 1935, p. 195.

գպրոցներ բացել և թուրք պաշտոնատարներ նշանակել Սանջաքի «մեծամասնությամբ թուրք ցեղին պատկանող բնակիչներ»6 ունեցող գավառներում։

Քաղաքական և դիվանագիտական վերոհիշյալ ակտերով ֆրանսիական մանդատային իշխանությունները, հակառակ իրենց բուրժուա-դեմոկրատական և աշխարհիկ սկզբունքներին. Սանջաքում (ինչպես և Սիրիայում) պահպանեցին և խորացրին օսմանյան տիրապետությունից ժառանգ մնացած՝ ֆեոդալական ազգային-դավանական համայնքների՝ «միլլեթ-ների» իրավական ստատուսը։ Այսպես, Սանջաքի արաբական մեծամասնությունը բաժանվեց արաբ-ալավի, արաբ-սունի, արաբ-հույն ուղղափառ, հույն-կաթոլիկ, մարոնի, ասորի, քաղդեացի, բողոքական և այլ «համայնքների»։ Իսկ բնակչության փոքրամասնությունը (շուրջ 20%-ը) կազմող թուրքերին միացնելով թուրքմենների, թրքացած կամ թրքախոս ուրիշ էլեմենտների հետ, ստեղծվեց, «թուրք ցեղին պատկանող բնակիչների» կամ «թուրքերի» միասնական «համայնքը», որին տրվեց իրավական ինքնուրույն և առանձնաշնորհյալ ստատուս։ Հայերին բաժանեցին հայ-գրիգորյան (լուսավորչական), հայ-կաթոլիկ, հայ-լատին, հայ-բողոքական «համայնքների». ընդ որում, բացի լուսավորչականներից, մնացած «համայնքները» պաշտոնական վիճակագրական տվյալներում հայ չէին հաշվվում և չէին մտցվում հայերի թվի մեջ։ Այս ձևով արաբների և հայերի իսկական թվերի արհեստական և ձևական նվազեցումով «թուրք ցեղին պատկանող բնակիչների» նորաստեղծ «համայնքը» դարձնում էին Սանջաքի ամենախոշոր միաձույլ փոքրամասնությունը։ Դա որպես «օրինական հիմք» պետք է ծառայեր Սիրիայի անբաժան այս մարզին՝ Սանջաքին պարտադրելու միայն թուրքերին նպաստավոր այն «հատուկ ռեժիմը», որը ոտնակոխ էր անում Սանջաքի արաբ և հայ բնակիչների հավասարության իրավունքները և խոչընդոտում Սիրիայի միասնականությանն ու անկախությանը։

Խտրական և անջատողական այս քաղաքականությունը արտահայտվում էր տարբեր միջոցներով։ Այսպես, 1936 թ. մարդահամարի պաշտոնական տվյալներում7 Սանջաքի 225.000 բնակչությունը բաժանվում էր ազգային-դավանական հետևյալ խմբերի.

Թուրքեր	—85 242—բնակչության 38%-ը
ալավի-արաբներ	—62 026 բնակչության 27%-ը
սունի-արաբներ	—22.461—բնակչության 10%-ը
հայեր	—28.857—բնակչության 13%-ը
հույն ուղղափառ և այլ քրիստոն.	—21.474 - բնակչության 9,5%-ը
քրդեր	— 1.891 }
չերքեզներ	— 954 } բնակչության 2,5%-ը

Ինչպես երևում է, «թուրքերիս» համայնքը ներկայացվում էր որպես Սանջաքի ազգաբնակչության համեմատաբար ամենախոշոր խումբը և այդ կատարվում էր արաբական մեծամասնության քաղաքական դերն ու կշիռը նվազեցնելու համար, որի ազգային կուռ միասնությունը ինելը անուղղակի կերպով ընդունում են նաև մանդատային իշխանությունները. «Սանջաքի բնակչության մեծամասնությունը, շուրջ 108.000, արարախոս է»8։ Հրջանի ազգաբնակչությունը, 1936 թ. ըստ լեզվական խմբերի ներկայացնում էր հետևյալ պատկերը9։

Արարախոսներ—բնակչության 47, 07%, թրքախոսներ 37,00%, հայախոսներ 13,37%, ուրիշ լեզուներով խոսողներ 2.66%-ը։

Սանջաքի «թուրք համայնքը» կազմված էր փաստորեն բուն (օսմանցի) թուրքերից, թուրքմեններից և թրքացած կամ թրքախոս արաբներից ու այլ ազգության մարդկանցից։ Թուրքմենները հանդիսանում են այդ «համայնքի» մի զգալի մասը, շուրջ 25% (մոտ 20.000 մարդ)։ Նրանք ապրում են Ամանոսի հարթավայրի արևելյան մասում մինչև Կարա-Սուի հովիտը և Ամանոսյան լեռներում՝ մինչև Հայիլեր (և սահմանից հյուսիս), ինչպես նաև Քնսապից հարավ՝

---

* Ընդգծումը մերն է։ Այս ձևակերպումը, ֆրանսերեն՝ „Habitants de race turque" ուսաֆին անգամ գործածվել է Անկարայի համաձայնագրում։

7 Տե՛ս „Asie Française", Decembre 1936, Paris, նաև Atta A. A., Le Conflit d'Alexandrette et la Societe des Nations, Dumas. 1949, p. 5.

8 Morgan J. J., op. cit. p. 112.

9 Տե՛ս Atta A. A., op. cit. p. 5.

Բայրր-Բուչաք գավառակում[10], Սանջաքի թուրքմենները խոսում են «չ թե օսմանյան թուրքերեն, այլ թուրքմեներեն։ Նրանք ունեն շրջանի թուրքերից տարբեր կացութաձև, կենցաղ ու բարքեր. տարբեր տարազ ու դավանանք (մեծ մասամբ շիիթ են)։ Այդ մասին կան բնիկ սանջաքցիների[11] և օտար հեղինակների վկայությունները՝ «Որոշ թվով թուրքական (թուրքմեն) գյուղեր, մասամբ ցեղախմբային կազմակերպությամբ (կացութաձևով) կային Սիրիայի հյուսիսային սահմանամերձ շրջաններում...»[12]։ Ֆրանսիացի հեղինակ Ժաքոն գրում է. «Պետք է նշել, որ Ամանոսի և Տավրոսի թուրքոմանները (թուրքմեններ) շփվելով հայերի և քրդերի հետ կրել են էթնիկական խորը այլափոխումներ»[13]։ Ֆրանսիացի հեղինակ Պոլ դյու-Վեուն, Սանջաքի թուրք ցեղին պատկանող բնակիչների» մասին խոսելիս մշտ գործ է ածում «թրքախոսներ» (Turcophones) տերմինը[14]։ Արդարև, այդ «թրքախոսների» մեջ կան զգալի թվով արաբներ, չերքեզներ, թուրքմեններ, քրդեր։ «Մոտ 20.000 թուրքմեններ, քրդեր Սանջաքում խոսում են թուրքերեն»[15]։ Սանջաքի «թուրք համայնքի» ոչ-միատարր լինելու մասին խոսում են նաև սիրիական պաշտոնական աղբյուրները։ Այսպես, եթե մանդատային իշխանությունները գտնում էին, որ Սանջաքի ազգաբնակչության 38%-ը թուրքեր են, ապա Սիրիայի ներքին գործերի մինիստրության վիճակագրական տվյալներով Սանջաքի բնակչության միայն 23%-ն են կազմում թուրքերը[16]։ Սիրիայի ինֆորմացիայի գլխավոր վարչության պաշտոնական բյուլետենում կարդում ենք. «1936 թ. Ալեքսանդրետի պրոբլեմը բարձրացվեց այն պատրվակով, որ այնտեղ կա թուրքերի և թուրքմեններ փոքրամասնություն, արաբական մեծամասնության կողքին»[17]։

Անդրադառնալով Սանջաքի հայ ազգաբնակչության իսկական թվին, պետք է ասենք, որ այն զգալի չափով բարձր է պաշտոնական տվյալներից՝ մոտ 29.000-ից։ Արդարև դեռ 1909 թ. Սանջաքի տերիտորիայում ապրում էին մոտ 26.000 հայեր (Պոլսո պատրիարքարանի տվյալներով)[18]։ 1915 թ. միայն Մուսա-լեռան հայ գյուղերում եղել է 6311 հայ[19], Քեսապի շրջանում՝ 8000—10.000[20]։ 1921 թ. հետո 10—12.000 հայեր հաստատվեցին Սանջաքում։ 1937 թ. Ալեքսանդրետում կար 8227 հայ, Կրկ-Խանում՝ 4388 և Ռիհանիե ու շրջակա Հայաշեն, Վարդաշեն, Սոուք-Սու գյուղերում՝ 3000-ից ավելի հայ[21]։ Նույն ժամանակաշրջանում Բեյլանում ու շրջակա գյուղերում կար 4000, Քեսապի շրջանում՝ 7000, Անտիոքում՝ 1000, իսկ Մուսա-լեռան գյուղերում շուրջ 10.000 հայ։ Այս թվերի մեջ չեն մտնում մոտ 5000 հայ կաթոլիկներն ու բողոքականները։ Նշված թվերը հաստատվում են Անտիոքի (Սանջաքի) թեմի այդ տարիների հայոց առաջնորդ՝ Խաչ Արք. Աջապահյանի կողմից, որն ասում է. «Սանջաքի մեջ այդ տարիներուն կային 35.000-են ավելի Հայ Առաքելական Եկեղեցվո զավակներ. կային նաև 5—6 հազար կաթոլիկ և բողոքական հայեր»[22]։

---

[10] Véou, P. du, Les Chretiens en Peril au Moussa-Dagh, Paris, 1939, p. 145.

[11] Տե՛ս ՀՍՍՌ ԳԱ արևելագիտության սեկտորի արխիվ, գործ 1, 2, 3։

[12] Longrigg S. H., Syria and Lebanon Under French Mandate, London, 1958, p 7.

[13] Jacquot, Paul, Antioche. Tome I. Beyrouth, 1931, p. 31.

[14] Տե՛ս Véou, P. du, Le Désastre d'Alexandrette, Paris, 1938, p. 42, 48, 64, 74.

[15] St. Point, V de, La Verite sur la Syrie, Paris, 1929, p. 154.

[16] Տե՛ս Օրմանյան Մ. Արք., Հայ եկեղեցին և իր պատմությունը, Կ. Պոլիս, 1911, منشور رقم ١ لجنة الدفاع اسكندرونة دمشق ١٩٣٧

[17] R. A. U. Direction Generale de l'Information, Damas, 1959—60, p. 174. (Histoire, Faits...).

[18] Տե՛ս Օրմանյան Մ. Արք., Հայ եկեղեցին և իր պատմությունը, Կ. Պոլիս, 1911, էջ 264, № 60, Անտիոքի թեմում՝ 15.000 հայ, Հալեպի թեմի Ալեքսանդրետ և Բեյլան կազաներում՝ 11 000 հայ։

[19] Սայրի Տ. Թ., Ալյակներ, Ալյակներ, Կահիրե, 1920, էջ 18։

[20] Թեմիրյան Ա., Քեսապ, Պեյրութ, 1956 թ., էջ 30։ Նաև Véou, P., Chretiens op. cit. p. 84.

[21] Véou, P. du, Chretiens, op. cit. p. 124, 133 Jacquot, P., op. cit. p. 162.

[22] Տե՛ս Սեկտորի արխիվ, գործ 4։

Այսպիսով, փաստորեն 1937 թ. Սանջաքում ապրում էին շուրջ 43.000 հայեր, որոնց 70%-ը շրջանի նախաբնիկներից են. Սանջաքի հայերի ճնշող մեծամասնության բնիկ լինելու մասին վկայում են նաև Սանջաքի տերիտորիայում գտնվող տասնյակներով հնադարյան պատմական հուշարձանները՝ վանքեր, եկեղեցիներ, ամրոցներ։ Այդ մասին են վկայում վերջին ժամանակաշրջանում արդեն տչ-հայաբնակ վայրերի հայկական տեղանունները։ Այսպես, Էրմենիկ, Կիրակոսիե (Քուսեյր գավառում), Պետրիսե (Պետրոսիե), Ֆենք (վանք), Ռֆաիլ-Ռաֆայել (Քեսապի գավառի Բրքական գյուղեր), Միասուն, Խաչատուրենք (Սուեյդիեի ալավի գյուղեր), չհաշված Պաղրաս (Կիլիկյան ամրոց, այժմ Թուրքմեն գյուղ), Արամո, Աքիկ և այլն[23]։ Մեր թեզը հիմնավորող անառարկելի փաստ է վերջապես այն իրողությունը, որ Սանջաքի բնիկ հայերը մինչև օրս էլ, լինեն Սիրիա-Լիբանանում թե Սովետական Հայաստանում, խոսում են իրենց բնիկ հայկական ինքնուրույն չորս բարբառներով (Սվեդիո, Քեսապի, Բեյլանի, Արամոյի), որոնք հանդիսանում են կիլիկյան միջին հայերենի բարբառային ճյուղեր։ Այս մասին կան լեզվաբանական, բարբառագիտական լուրջ աշխատություններ[24]։

Պետք է ասել, որ Սանջաքի 1937 թ. 240.000 բնակչության շուրջ 50%-ը (115.000 հոգի) կազմում էին արաբները, թուրքերը՝ 23% (55.000), հայերը՝ 18% (43.000), թուրքմենները՝ 8% (շուրջ 20.000), քրդեր, չերքեզներ և այլ ազգեր 3% (7000)։

Սանջաքում մանդատային իշխանությունները վարում էին Սիրիայի մասնատման և պրոթուրքական բացահայտ խտրականության քաղաքականություն՝ ի վնաս Սիրիայի ու շրջանի արաբական մեծամասնության։ Քաղաքական այդ գիծը դրսևորվում էր թե՛ պետական պաշտոնների բաշխման, թե՛ բյուջետային հատկացումների, թե՛ ուսումնա-մշակութային, քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում։ Արդարև, Սանջաքի կառավարման տեղական օրգաններում ղեկավար պոստերը ճնշող մեծամասնությամբ գտնվում էին թուրքերի ձեռքում։ Ֆրանսիացի հեղինակ Մ. Հոմենն գրում է. «Մուհաֆազայի (Սանջաքի) թուրքերը ներկայացնում են բնակչության միայն 23 տոկոսը, բայց զբաղեցնում են պետական պաշտոնների 65 տոկոսը»[25]։ Արդարև Սանջաքի մութեսարիֆն (կառավարիչն) էր օսմանյան նախկին չինովնիկ, թուրք Իբրահիմ էդհեմ Մումենը, մութեսարիֆության ընդհանուր քարտուղարը՝ պոլսեցի թուրք Ալաեդդին բեկը։ Անտիոքի և Կրկ-Խանի կազաների կայմաքամներն[26] էին Քուսեյրիզադեն և Սրդկի բեկը, երկուսն էլ թուրք։ Նահիեների մուդիրները[27], դատավորները նույնպես մեծ մասամբ թուրքեր էին լինում։ Սանջաքի վարչական խորհրդի 12 անդամներից 7-ը, պետական 6 վարչություններից 4-ի պետերը նույնպես միշտ, գրված կամ չգրված օրենքով, լինում էին թուրքեր։ Ժանդարմերիայի և ոստիկանության անձնակազմի ճնշող մեծամասնությունը՝ 62% և 55%-ն նույնպես կազմված էր թուրքերից, արաբները՝ 28% և 31%[28]։

Բյուջետային հատկացումներից նույնպես ավելի շատ օգտվում էին թուրքական էլեմենտները։ Քաղաքապետությունների 3.176.000 ֆր. տարեկան բյուջեից 1.166.320 ֆր. (37%) 1936 թ. հատկացվել էր միայն Անտիոքի քաղաքապետությանը, որտեղ բնակչության 70% թուրքեր էին, իսկ Կրկ-Խան, Ռիհանիե, Սուեյդիե, Արսուզ, Բեյլան, Քեսապ, Բիթիաս, Սոուք-Օլուք և այլ (շուրջ 10) քաղաքների ու ամառանոցային ավանների քաղաքապետություններին՝ այդ բյուջեի միայն 31%-ը, չնայած որ այդ քաղաքների ու ավանների մեծամասնությամբ արաբ և հայ բնակչությունը Անտիոքի բնակչությունից մոտ 3 անգամ ավելի էր[29]։

---

23 Տե՛ս Թեմիրյան Ա., նշված աշխտ., էջ 147։

24 Հր. Աճառյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1946, Ա. Ղարիբյան, Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Երևան, 1958, Ա. Փաշայան, Սվեդիո բարբառը (դիսերտացիա), Երևան, 1964 (հոդվածը տե՛ս «Տեղեկագրի» № 9-ում)։

25 Homet, M., Syrie—Histoire Secrete du Traité Franco-Syrien", Paris, 1938 p. 243.

26 «Կազա»-ն Սանջարի կազմի մեջ մտնող վարչական բաժանում է, որտեղ տեղական իշխանության պետն է «կայմաքամը»։

27 «Նահիե»-ն կազայի կազմի մեջ մտնող վարչական բաժանում է, որտեղ իշխանության պետն է «մուդիրը»։

28 Տե՛ս Jacquot, op. cit. p. 33.

29 Տե՛ս „Rapport a la S. D. N. sur la situation en Syrie 1936", Paris, 1937 p 111.

Ոչ-Թուրք ազգություններին ի վնաս կիրառվող խտրականությունը ավելի բացահայտ էր հատկապես հանրային կրթության նպատակին բյուջետային հատկացումներում և ընդհանրապես ուսումնա-մշակութային կյանքի բնագավառում։ 1936 թ. հանրային կրթության 1.732.720 ֆր. գումարից[30] 1.030.396 ֆր. հատկացվել էր թրքական դպրոցներին, իսկ մնացած բոլոր դպրոցներին միայն՝ 729.300 ֆր.[31]։ Սանջաքի 70 պետական դպրոցներից 35-ը Թուրքական դպրոցներ էին, 28-ը՝ արաբական[32] և 7-ը՝ հայկական դպրոցներ։

1936 թ. պետական դպրոցներում սովորել են 2923 Թուրք, 2311 արաբ և միայն 475 հայ աշակերտներ[33]։ Եթե աշակերտական տեղերի բաշխումը կատարվեր իսկապես «հավասար վերաբերմունքի ռեժիմի» համաձայն, ըստ բնակչության համամասնության տոկոսների, արաբներ՝ 48%, Թուրքեր՝ 23%, հայեր՝ 18%, ապա 2923 Թուրք աշակերտների դիմաց արաբ աշակերտներին պետք է հատկացվեր մոտ 6000 տեղ, հայերին՝ ոչ թե 475, այլ առնվազն 2000 տեղ։ Իհարկե, Սանջաքի հայերը իրենց սեփական միջոցներով էին լրացնում մանդատային իշխանությունների «հոգատարության» թողած բացը և պահում էին 32 ազգային վարժարաններ՝ 3064 աշակերտներով[34]։ Պետական, ազգային և օտար վարժարաններում սովորող հայ աշակերտների թիվը դերազանցում էր 4000-ից (1936 թ.), որը կազմում էր Սանջաքի բոլոր 12.120 սովորողների 33%-ը։

Ուսման ասպարեզում մանդատային իշխանության պրո-Թուրքական խտրականության մասին են խոսում նաև ֆրանսիացի հեղինակները։ Մ. Հոմեն գրում է. «Թուրքական (պետական) դպրոցները շատ ավելի բազմաթիվ էին արաբականներից և հատկապես Անտիոքում կային Թուրքական 4 նախակրթարաններ, բացի տղաների և աղջիկների լիցեյներից, արաբական 2 փոքր դպրոցի և 2 վեցամյա դասընթացի դիմաց[35]։ Դյու Վեուն հայտնում է, որ ամեն տարի սանջաքցի 12 ուսանողի պետական կրթական թոշակ էր տրվում, որոնցից 8-ը լինում էր Թուրք, 4-ը՝ արաբ, իսկ ոչ մի հայ թոշակառու ուսանող[36]։

Նույն հեղինակը հայտնում է, որ ֆրանսիացիների թողտվությամբ 65 սանջաքցի Թուրք սովորում էր Թուրքիայի բուհերում, ընդ որում 13-ը զինվորական դպրոցներում[37]։ Անգլիացի հեղինակ Լոնգրիգն[38] էլ հաստատում է այդ։

Սանջաքի բնակչության ճնշող մեծամասնությունը (80 տոկոսից ավելին), ներառյալ նաև Թուրքերի մեծամասնությունը, կողմնակից էր Սիրիայի հետ միասնությանը և շրջանի ազգային-դավանական տարբեր խմբերի եղբայրական համագործակցությանը[39]։ Սանջաքի ժողովրդական մասսաները այդ ցույց տվեցին գործով՝ 1936—1938 թթ. Սիրիայի անկախության համար պայքարով՝ Սանջաքի հարցի բարձրացման ժամանակ[40]։ Սակայն, հայտնի է, որ Թուրք «երևելիները» (խոշոր կալվածատեր-առևտրականներ, պետական աստիճանավորներ) միշտ հակված էին դեպի Անկարայի կողմը։ Առևտրա-ֆեոդալական վերնախավի ուրիշ ներկայացուցիչներ, նայած ուժերի փոխհարաբերությանը, շարունակ երերում էին մանդատային իշխանության, Անկարայի կամ Սիրիայի շահերի ու քաղաքական կուրսի միջև։

Քաղաքական և ազգամիջյան փոխհարաբերությունները պարզ է, որ իրենց արտացոլումը պետք է գտնեին Սանջաքի քաղաքական խմբավորումների բնույթի և գործունեության մեջ։ Ազգերի Լիգայի միջազգային հանձնաժողովը 1937 թ. Սանջաքում գտնում էր քաղաքական հետևյալ խմբավորումները[41]. Ազգային Գործունեության Լիգա, Ազգայնական Բլոկ, Քեմալիստ-

---

[30] Տե՛ս Idem, p. 103.

[31] Տե՛ս «Ալեքսանդրետի Պաշտպ. կոմիտեն», բրոշյուր № 1, Դամասկոս, 1937։

[32] Նույն տեղում։

[33] Rapport à la S. D. N., 1936, p. 105.

[34] Idem.

[35] Homet M., op. cit. p. 243.

[36] Veou, Désastre, op cit. p. 35.

[37] Idem, p. 47.

[38] Longrigg, op. cit. p. 211.

[39] Véou, Désastre..., op. cit. 101—102.

[40] Տե՛ս Ազգերի Լիգայի ընդհանուր քարտուղարի հաղորդումը՝ „Documents of International Affairs—1937/1938", London, p. 514.

[41] Տե՛ս Atta A., op. cit. p. 52—53. Նաև Veou, Desastre... op. cit. p. 48—49

ներ (Հալբ-էվիներ), Սիրիայի կոմկուսի Սանջաքի կազմակերպություն, Սանջաքյան Սիությունն ե հայկական հնչակյան, ռամկավար-ազատական ու դաշնակցական կազմակերպություններ։ Բացի Թուրք շովինիստ էքստրեմիստներից, մնացած բոլոր խմբավորումները կողմնակից էին Սիրիայի հետ միասնությանը ե «բացարձակապես մերժում էին Սանջաքի առանձին անկախությունը, առավել ևս նրա նույնիսկ քողարկված միացումը Թուրքիային»[42]։

Ազգային Գործունեության Լիգան (Ասբաթ էլ-Ամալ Քաումի), ասն-արաբական օրիենտացիայով, խմբավորում էր Սանջաքի հիմնականում արաբ-ալավի և որոշ չափով արաբ-սունիի ու քրիստոնյա էլեմենտներին։ Լիգան բավական մեծ ազդեցություն և ուժեղ կազմակերպություններ ուներ շրջանի արաբական խոշոր բնակավայրերում՝ ակումբներ՝ Անտիոք, Ալեքսանդրետ, Սուեյդիե քաղաքներում։ 1930—1938 ԹԹ. Սանջաքում Լիգայի ղեկավարն էր Զեքի էլ-Արսուզին՝ Սորբոնի շրջանավարտ։ Լիգան Անտիոքում հրատարակում էր (1936—1938 ԹԹ.) «Ալ-Ուրուբա» թերթը։ Այն անվերապահորեն պաշտպանում էր Սիրիայի լիակատար անկախությունը, Սանջաքի միասնությունը Սիրիայի հետ ու պայքարում դրա համար։ Սակայն, դրսևորելով ասն-արաբիստական, շովինիստական մեծամտություն և այլամերժություն[43] ու որոշ պրովինցիալիզմ, Լիգան խուսափում էր քուրդիստների, կ-մունիստների և ուրիշ հայրենասիրական խմբավորումների հետ միասնական ճակատով պայքարից, վանում էր այդ պայքարից քրիստոնյաներին ու հայերին, չնայած Լիգայի ղեկավարության մեջ կային, բացի մուսուլմաններից (Արսուզի, Զախխուր, Զարքա, Ֆաուզի), նաև քրիստոնյաներ (Նախլե Ուարդ, Նեդիմ Ուարդ, Օդետ Ադիբ) և մեկ հայ՝ բժ. Գեղարդ Մաթոսյանը[44]։ Տագնապալի օրերին միայն, Սանջաքի գոյությանը սպառնացող Թուրքական վտանգի ճնշման տակ, Լիգան հարկադրված՝ պայքարի միասնական ճակատի մեջ մտավ հայրենասիրական մյուս խմբավորումների հետ, հանուն արաբական Սանջաքի պաշտպանության[45]։ Լիգայի ազդեցությանն էր ենթակա «Հայրենիքի հետախույզներ» (Քեշֆեֆ էլ-Ուաթան) երիտ-մարզական կազմակերպությունը, որի հակակոմունիստ ղեկավար Մոհամեդ Ալի էլ-Զարքան ավելի շուտ նեղ շովինիստական, քան հայրենասիրական դաստիարակություն էր տալիս արաբ երիտասարդությանը[46]։

Ազգայնական Բլոկը (Քութլաթ էլ-Ուաթանիյե), որը արտահայտում էր հիմնականում Սիրիայի կալվածատիրական ու բուրժուական վերնախավի ձգտումները և 1930-ական թվականից սկսած գլխավորում էր ազգային-ազատագրական պայքարը Սիրիայում, Սանջաքում ուներ համեմատաբար թույլ ազդեցություն և փոքրաթիվ հետևորդներ, գլխավորաբար սունիի արաբներից[47]։ Քութլայի թուլությունը Սանջաքում պետք է բացատրել Սանջաքի արաբական քաղաքական կյանքում Ազգային Գործունեության Լիգայի գրաված իշխող դիրքով։ Արդարև, Լիգան գործնականում արտահայտում էր շրջանի արաբ բնակչության ալավի-քրիստոնյա մեծամասնության (80 տոկոսից ավելիի) շահերն ու իղձերը և հակառակ իր ասն-արաբիստական սկզբունքներին, հաճախ վարում էր նեղ պրովինցիալիստական քաղաքական գիծ, տեղի արաբների շահերը պաշտպանելու պատրվակով հակադրվելով Դամասկոսի կամ Հալեպի,

[42] Idem, p. 49—50.

[43] Տե՛ս Զեքի-էլ-Արսուզի. Մեզաքիլնա ալ-Քաումիյյաս..., Դամասկոս, 1956:

زكي الأرسوزي — مشاكلنا القومية و موقف الأحزاب السياسية منها — دمشق سنة ١٩٥٦ — ١٢٧٥

[44] Տե՛ս Նախլե Ուարդ, Անթաքիե. Ստե Պաուլ, 1956:

نخلة ... د — «انطاكية» — سان باولو سنة ١٩٥٦ ص — ٣١٦ شكل ٢

[45] Տես Atta, A, op. cit, p, 53: Նաև «Ալ-Ուրուբահ», Անտիոք:

«العروبة» جريدة — انطاكية — رقم سنة ٢٩/١١/٩٣٧ — ٢٨ — ٢٧ — ٢٦ — ٢٥) سنة ٣٠/١/٩٣٨) سنة ٢/٢/٩٣٨

[46] Տե՛ս Մոհամեդ Ա. էլ-Զարքա. Եիյանեթ..., Կահիրե, 1961:

محمد علي الزرقة خيانات الحزب الشيوعي السوري — القاهرة — سنة ١٩٦١

[47] Տես Atta, op. cit. p. 52—53, Նաև Veou, Desastre, op. cit. p. 55—56.

իրը թե միա՛յն սունի-արաբների շահերը պաշտպանող քուրլայիստ ղեկավարության համասիրական քաղաքական միջոցառումներին։

«Սանջաքյան Միությունն» բլոկը կազմվեց 1937 թ., շրջանի հիմնականում ոչ-թուրք, տարբեր համայնքների ներկայացուցիչներից։ Այս բլոկը ընդունում էր Ազգերի Լիգայի խորհրդի կողմից 1937 թ. մայիսի 27-ին հաստատված Սանջաքի Նոր ստատուսով ստեղծված դրությունը[48], որը շրջանին տալիս էր «առանձին քաղաքական միավորի» (Entite Distincte) յուրահատուկ գոյավիճակ Սիրիայի կազմի մեջ[49]։ 1937—38 թթ. հանրաքվե-ընտրությունների ժամանակ Սանջաքյան Միությունը և բոլոր արաբ, հայ ու թուրք խմբավորումները միասնական ճակատով հանգես եկան ընդդեմ թուրք էքստրեմիստների բլոկի, հանուն արաբական-սիրիական Սանջաքի պաշտպանության։

Սանջաքի հայերի շրջանում կային հնչակյան, ռամկավար-ազատական և դաշնակցական կուսակցությունների տեղական կազմակերպություններ։

Դեռ 1890 թ. սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության կազմակերպություններ էին ստեղծվել հնչակյան գործիչ Աղասիի նախաձեռնությամբ Մուսա-լեռան, Քեսապի, Անտիոքի ու Ալեքսանդրետի հայերի շրջանում[50]։ Հաջորդ տասնամյակներում առաջացան նաև դաշնակցական և ռամկավար կուսակցական կազմակերպություններ, որոնք 1921 թ. հետո ուրիշ տեղերից տեղափոխված հայերի նոր խմբերի կուսակցականներով համալրվելով, ծավալեցին ազգային-քաղաքական զգալի աշխատանք։ Բացի մի քանի դաշնակցական ղեկավարներից ու «աղաներից», Սանջաքի հայ ազգաբնակչության մեծամասնությունը և հայ քաղաքական-հասարակական խմբավորումները Սանջաքում ընդհանրապես տարել են սիրիական հայրենիքի հետ միասնության, Սիրիայի անկախության պայքարին համակիր հակա-իմպերիալիստական քաղաքական գիծ։ 1936 թ. Հալեպում ստեղծված «Սուրիահայ ժողովրդական ճակատը» կոմիտեներ ուներ Սանջաքի բոլոր հայաբնակ վայրերում[51]։ Նույնպիսի հայրենասիրական գործունեություն էին կատարում նաև Սանջաքի «Հայաստանի Օգնության Կոմիտեները» (ՀՕԿ), Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության մասնաճյուղերը և նրանց ենթակա երիտասարդական մշակութային միությունները։ Սանջաքի հայության քաղաքական ճիշտ դիրքավորման մասին են խոսում պատմական փաստերը, արաբական մամուլն ու քաղաքական գործիչները[52] և օտար հեղինակները։ Անգլիացի հեղինակ Լոնգրիգը գրում է. «Ելնելով հայ-թուրքական նախկին հարաբերություններից, հայ-արաբական համերաշխությունը Սանջաքում հաստատուն էր»[53]։

Սանջաքի արաբ և հայ ամենապրոգրեսիվ երիտասարդությունը գտնվում էր հակաիմպերիալիստական ու անկախության պայքարի ավանգարդում՝ Սիրիայի Կոմկուսի շարքերում։ Դեռևս 1925—1926 թթ. մարքսիստական երիտասարդական խմբակներ էին ստեղծվել Մուսա-լեռան Յողան-Օլուք գյուղում և Ալեքսանդրետում[54]։ 1928—1930 թթ. այդ խմբակները դառնում են կոմունիստական բջիջներ և կապ հաստատում Սիրիայի կոմպարտիայի կենտրոնի հետ։ Շարժման մեջ ընդգրկվում են նաև արաբ բանվորներ ու աշխատավորներ։ 1930 թ. կոմբջիջ է ստեղծվում նաև Անտիոքում։ 1932 թ. սկսած ակտիվ պայքար է ծավալում Ալեքսանդրետի կազմակերպությունը։ 1935—36 թթ. նոր թափ է ստանում կոմունիստների գործունեությունը Սանջաքում։ Մուսա-լեռան հայկական գյուղերում շարժումը ղեկավարում են Հ. Տեր-Պետրոսյանը, Հ. Ջեմենյանը, Ալեքսանդրետում՝ Ղ. Ռաղվանը, Աֆիֆ, Հովհ. Մաճառյանը, Հ. Մախյանը[55], Փ. Խրաբելյանը։ Կոմունիստների և Քուրլայիստների համատեղ ջանքերով Սանջաքի

---

[48] Տես Atta, op. cit. p. 53.

[49] Նոր Ստատուսի տեքստը տե՛ս Journal Officiel de la Societe des Nations, Geneve, 1937. Juin, p. 573 –589.

[50] Տե՛ս Թեմիրյան Ա., նույն աշխ., էջ 39, 79, նաև, Աղասիի հուշերը, նույն տեղում, էջ 135—150։

[51] Տե՛ս Սեկտորի արխիվ, գործ 5։

[52] Տե՛ս «Ալիֆ-Բա՝», օրաթերթ, Դամասկոս, 11—5—1937, Դր. Շահբանդարի կարծիքը Սանջաքի հայերի մասին. الف باء - جريدة يومية — دمشق ١١/٥/٩٣٧ նաև Echos de Syrie, Damas, 11—6—1938

[53] Longrigg, op. cit p. 239.

[54] Տե՛ս Սեկտորի արխիվ, գործ 1, 6։

[55] Հետագայում Կոմկուսից հեռացված։

հայրենասեր մասսաները մասնակցում են Սիրիայի 1936 թ. հունվար-փետրվար ամիսների քաղաքական ընդհանուր գործադուլին։ Ֆրանսիայում հակաֆաշիստական ժողովրդական ճակատի հաղթանակի և ֆրանս-սիրիական դաշնագրի ստորագրման հետևանքով երկրում ստեղծված դեմոկրատական որոշ ազատություններից օգտվելով, կոմկուսակցությունը անցնում է բացահայտ և մասսայական գործունեության։ Գոյություն ունեցող համքարությունների հիման վրա, կոմունիստների օժանդակությամբ, առաջանում են Ալեքսանդրետի նավահանգստային, փայտամշակման բանվորների և ձկնորսների արհմիություններ, որոնք կազմակերպում են մի շարք հաղթական գործադուլներ ու խիզախ ելույթներ 1936 թ. գարնան-ամռան ամիսներին[56]։ Հուլիսին կազմակերպվում է խաղաղ ժողովրդական ցույց հացի գների բարձրացման դեմ, որը պսակվում է հաղթանակով։ 1937—1938 թթ. Սանջաքի հարցի և հանրաքվե-ընտրությունների կամպանիայի ժամանակ Սանջաքի կոմունիստական կազմակերպությունները եռանդուն պայքար են տանում արաբական Սանջաքի պաշտպանության համար, սերտորեն համագործակցելով Քուվայթի, Ազգային Գործունեության Լիգայի և արաբ, հայ, թուրք հայրենասիրական բոլոր կազմակերպությունների հետ։ Սանջաքի կոմունիստների գործունեության հիմքում միշտ ընկած է եղել հետևյալ քաղաքական գիծը՝ Սիրիայի անկախության և առաջադիմության միասնական պայքարի ճակատում համախմբել շրջանի բոլոր հայրենասեր ու հակա-իմպերիալիստական ազգային ու քաղաքական խմբավորումները։ Այդ քաղաքական գիծը կյանքում իրագործվեց հատկապես 1935—1938 թթ. Սիրիայի անկախության և Սանջաքի պաշտպանության պայքարի ընթացքում։ Այդ տարիներին Սիրիայի կոմկուսի Սանջաքի կազմակերպությունը իրավամբ համարվում էր շրջանի ամենակազմակերպված, ամենաժողովրդական և ամենազգեցիկ քաղաքական խմբավորումը։ Նույնիսկ բուրժուական հեղինակ Լոնգրիգը խոստովանում է, որ «կոմունիստական պարտիան... ցույց տվեց իր բարձր կազմակերպվածությունը և պատշաճ կերպով պայքարեց սիրիական դատի համար Ալեքսանդրետումը»[57]։

Սանջաքի կոմունիստների հայրենանվեր գործունեության անառարկելի ապացույցն է այն, որ զավթելով Սանջաքը, Անկարան առաջին և ամենաուժեղ հարվածը հասցրեց կոմունիստներին, ձերբակալելով բոլոր ակտիվ կոմունիստներին ու փակելով նրանց ակումբը[58]։

Սանջաքի թուրքական ազգաբնակչության շրջանում կային ծայրահեղ քեմալիստների և «պրո-սիրիական ավտոնոմիստների» խմբավորումներ, որոնք կողմնակից էին ավտոնոմ Սանջաքի Սիրիայի կազմի մեջ մնալուն։ Սանջաքի թուրքերի մեծամասնությունը հպամկիր էր այս վերջին խմբավորման քաղաքական գծին[59]։ Սակայն նա չկարողացավ վճռական դեր կատարել թուրք համայնքի քաղաքական կյանքում, որովհետև նրա ղեկավար վերնախավը վարելով «թայֆայական» (գերդաստանների) նեղ շահերին համապատասխանող իրարամերժ ու երերուն քաղաքականություն, հետևաբար լինելով անկազմակերպ, չկարողացավ իր հետևից տանել շրջանի թուրք մասսային։

Հենց այդ մասսայի շովինիստական զգացմունքների սպեկուլյացիայի վրա էր հիմնված էքստրեմիստների («Հալք-էվի»-նիրի—Ժողովրդի տների) խմբավորման ողջ գործունեությունը։ Թուրք էքստրեմիստների գաղտնի կամ կիսալեգալ կազմակերպություններ գոյություն են ունեցել Սանջաքում 1920-ական թվականներից սկսած։ 1930 թ. Անտիոքում գործում էր ֆաշիստական տիպի «Երիտ-սպորտ ակումբը»[60], որի կադրերը պատրաստվեցին իտալական և գերմանական ագենտների կողմից[61]։ 1936 թ. Անտիոքում պաշտոնապես բացվեց «Հալք-էվի», որը դարձավ «տեռորիստական և խառնակիչ աշխատանքի գլխավոր շտաբ» Սանջաքում[62]։ Հալք-էվիներ և «Հաթայի պաշտպանության գաղտնի ընկերության» մասնաճյուղեր բացվեցին Ալեքսանդրետում, Քուսեյրում, Օրդուսում, Ամուքում և այլուր[63]։ «Ժողովրդի պարտիան»

---

[56] Տե՛ս Սեկտորի արխիվ, գործ 7։

[57] Longrigg, op. cit. p 277.

[58] Տե՛ս «Ժողովուրդի Ձայնը», Պեյրութ, 10, 7. 1938։

[59] Տե՛ս Veou, Desastre, op. cit. p. 48, 67, 101.

[60] „Genc Spor Klübü".

[61] Տե՛ս Veou, Desastre, op. cit. p. 49.

[62] Idem, p. 55.

[63] Idem, p. 59.

(Հալբ-էվին) 1937—1938 թթ. հանրաքվե-ընտրությունների ժամանակ մանդատային իշխանության կողմից ճանաչվեց որպես Սանջաքի թուրքերի քաղաքական շահերի ներկայացուցիչ[64]։

Ինչպես այսօր Կիպրոսում, Սանջաքի թուրք էքստրեմիստները պահանջում էին շրջանի անջատումը Սիրիայից կամ Սանջարի ուղղակի կցումը Թուրքիային։ Իրենց նպատակին հասնելու համար նրանք դիմում էին բոլոր տեսակի միջոցների։ Լավ կազմակերպված այս խմբավորման հաջողությանը սատարում էին թե՛ ներքին հանգամանքները, թե՛ արտաքին ֆակտորները, հատկապես։ Անունով «ժողովրդա-ռեսպուբլիկական», սակայն էությամբ շովինիստական ու պանթյուրքիստական լոզունգներով ու ագիտացիայով նրանք նվաճում էին շրջանի թուրք մասսաներին, հատկապես երիտասարդությանը։ Ֆրանսիացիների կողմից չնպաստավորված թուրք «ներևլիները» նույնպես էքստրեմիստների կողմն էին։ «Անհոգ ադմինիստրացիան (մանդատային իշխանությունը) եթե չէր քաջալերում, գեթ թույլ էր տալիս էքստրեմիստների գրգռիչ գործունեությունը Սանջարում[65]։ Ամեն տարի հարյուրավոր թուրքեր Թուրքիայից անարգել անցնում էին Սանջաք զանազան պատրվակներով[66]։ Նրանցից շատերը մնում էին շրջանում և համալրում էքստրեմիստ ագենտների շարքերը։ Դյու-Վնուն գրում է. «Ֆրանսիան ոչ մի պատասխան միջոցի չդիմեց, այլ կոկետություն համարեց ավելի լայնացնել այն ուղին, որը հենց ինքն էր բացել թուրքերի համար»[67]։ Անտիոքի «Ենի Դյունյա» թերթը ֆինանսավորվում էր ո՛չ միայն Անկարայի, այլև իտալացիների կողմից։ Թուրք ամենաշովինիստ հեղինակների երկերը, բոլոր թերթերը անսահմանափակ քանակությամբ ստացվում և անարգել տարածվում էին Սանջաքի թուրքերի ու ոչ թուրքերի շրջանում[68]։ Թուրքական ռադիոյի ամենօրյա, ամենաժամյա հակասիրիական, հակաֆրանսիական, հակահայկական գրգռիչ հաղորդումները անարգել տարածվում ու գիշեր-ցերեկ ունկնդրվում էին Սանջաքի բոլոր բնակավայրերի հրապարակներում, զբոսավայրերում, սրճարաններում, հավաքույթներում շնորհիվ Սանջաքի էքստրեմիստների ջանքերի։ Իշխանությունները չէին մտածում այդ քայքայիչ ու ազդու զենքի դեմ նույնիսկ որևէ արգելք դնելու մասին։ Թուրքական գրավոր թե բանավոր պրոպագանդայի հիմնական միտքը հետևյալն էր. Սանջաքը թրքական հող է, թուրք բնակչության ճնշող մեծամասնությամբ, թուրքերին այնտեղ ճնշում, հալածում են ֆրանսիացիները, արաբները, ...հայերը, հետևաբար «թուրքական այդ հողի թուրք արյունակից եղբայրներին պետք է վերադարձնել մայր-հայրենիքի գիրկը»[69]։

Թուրք էքստրեմիստների գործունեությունը Սանջաքում փաստորեն հանդիսանում էր Անկարայի կոպիտ միջամտություն հարևան երկրի ներքին գործերին։ Արդարև, շովինիստների ներքին քայքայիչ ու սեպարատիստական շարժումներ զուգահեռ, Անկարայի կառավարությունը շարունակ քաղաքական ու տերիտորիալ պահանջներ էր ներկայացնում Սանջաքի նկատմամբ, Անկարայի 1921 թ. համաձայնագրից էլ հետո[70]։

Ալեքսանդրետի հարցը փաստորեն առաջ քաշվեց 1934 թ. ապրիլի 27-ին, երբ Այնթաբի վալին (նահանգապետը) այցելեց Անտիոք։ Ֆրանսիացիների թողտվությամբ թուրք էքստրեմիստները «հաղթական ընդունելություն կազմակերպեցին պ. Աթաթուրքի ներկայացուցչին», մեծ ցույցերով, Աթաթուրքից պահանջելով «Սանջաքի թուրքերի փրկությունը»[71]։ Այդ ցույցերին հետևեցին խառնակություններ, արյունահեղ ընդհարումներ, որոնք պարբերաբար կրկնվեցին մինչև 1935—36 թթ. Զուգահեռ կերպով կատարվում էին քաղաքական բուռն ելույթներ ու պահանջներ թուրքական Ազգային ժողովում[72], ռադիոյով, մամուլում, մինչև 1936 թ. սեպտեմբերը, երբ ֆրանս-սիրիական դաշնագրի ստորագրումից հետո Անկարան գտավ, որ հարմար ժամանակն է միջազգային ոլորտի վրա դնելու «Սանջաքի հարցը»։

---

[64] Տե՛ս Aïta, op. cit. p. 53.

[65] Barbaro, Jean Elie, La Question du Sandjak d'Alexandrette, Alep, 1941, p. 26.

[66] Տե՛ս Himadeh S. B., Economic Organisation of Syria, Beirut, 1936, p. 23.

[67] Veou, Desastre, op. cit. p. 47.

[68] Idem.

[69] Տե՛ս „Tan", Istanbul, 18.9. 1935, Նաև 1934—1936 թթ. թուրքական մամուլը։

[70] Տե՛ս Homet M., op. cit. p. 236, Longrigg, op. cit. p. 238.

[71] Տե՛ս Veou, Desastre, op. cit. p. 50 և Idem, p. 211.

[72] Տե՛ս Homet M., op. cit. p. 238.

Այդ հարցը միակողմանի և թերի է ուսումնասիրված արտասահմանյան պատմագրության մեջ. մեզ մոտ չի հրապարակվել ոչ մի առանձին աշխատություն այդ մասին։ Կարծում ենք, որ 1920—30-ական թվականների Սանջաքի վիճակի մասին ներկա հակիրճ ակնարկը որոշ լուսաբանում կտա Սանջաքի պրոբլեմի վերաբերյալ։

А. А. Байрамян

ЮРИДИЧЕСКИЙ СТАТУТ И ПОЛИТИЧЕСКИЕ ГРУППИРОВКИ АЛЕКСАНДРЕТТСКОГО САНДЖАКА (1920—1930)

Резюме

«Автономный Санджак Александретты» был образован французскими оккупационными властями 27 ноября 1918 г. Основной целью этого политического акта было то, чтобы заранее создать юридические препятствия на пути образования независимой и единой Сирии. Акт образования «Автономного Санджака Александретты» был утвержден франко-турецким договором, подписанным 20 сентября 1921 г. в Анкаре (ст. 7) и получил международную юридическую силу.

В данной статье на основании соответствующих политических и дипломатических актов и сопредельных документов исследуется сущность юридического статута Санджака и показывается протурецкий дискриминационный характер специального режима Санджака. В арабско-сирийском Санджаке, где турки составляли лишь 23% всего населения (по официальным сирийским данным), весь местный государственный аппарат находился в руках турок. Под покровительством представителей французских мандатных властей турецкие чиновники проводили политику по расчленению Сирии, а также попирали права местного большинства (арабов, армян и др.) в области экономического, политического и культурного развития.

Политико-экономические и межнациональные отношения в Санджаке отразились в деятельности и сущности политических группировок области. Автор стремится дать характеристику действующих в Санджаке основных политических группировок (Лига национальной деятельности, Санджакская организация Сирийской компартии, Национальный блок и др.), которые стояли за сохранение единства с Сирией. Открытую сепаратистскую политику вела группировка турецких экстремистов (Халк-эви), которая непосредственно финансировалась и руководствовалась со стороны Анкары. Параллельно деятельности этой группировки, Анкара предъявляла политические и территориальные претензии к Санджаку. Все это привело к тому, что в сентябре 1936 г. в связи с заключением франко-сирийского договора Анкара выдвинула на международную арену вопрос Александреттского Санджака.